შეფასებისა და გამოცდების ეროვნული ცენტრი

# Երաժշտության թեստ

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից. I ունկնդրման մաս , II փակ և բաց առաջադրանքներ, որոնք ներկայացված են առանց ունկնդրման նյութերի:

Ունկնդրման մասի համար հատկացված է սահմանված ժամանակ: Թեստի էլեկտրոնային բուկլետում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան հրահանգում նշված է առաջադրանքը կատարելու համար հատկացված կոնկրետ ժամանակը:

Մնացած ժամանակը ըստ Ձեր հայեցողության բաժանեք թեստի II մասի առաջադրանքները կատարելու համար:

**Թեստի առավելագույն միավորն է՝ 70:**

**Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:**

**Մաղթում ենք հաջողություն :**

I մաս՝ ունկնդրում

Ունկնդրման մասը միավորում է տասը առաջադրանք:

**Առաջադրանքներ 1-6:** (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան ՝ 1 միավոր)

Հրահանգ: Լսեք երաժշտական հատվածները և պատասխանեք համապատասխան հարցերին: Առաջին վեց առաջադրանքում յուրաքանչյուրի համար հատկացված է մեկ երաժշտական հատված և երկու հարց: Յուրաքանչյուր հարցին կից տրվում է չորս ենթադրական պատասխան: Ընտրեք և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք մեկ ճիշտ պատասխան:

Յուրաքանչյուր երաժշտական հատվածը լսում եք երկու անգամ: Առաջին և երկրորդ ունկնդրումների միջև դադարը կազմում է 20 վայրկյան:

Նախքան յուրաքանչյուր առաջադրանքի համար հատկացված երաժշտական հատվածի ունկնդրումը տրվում է 10 վայրկյան, առաջադրանքի հարցերը ընթերցելու համար:

(Առաջադրանքները տրված են հաջորդ էջից:)

Առաջադրանք 1.

Նախքան առաջին երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (1.1 և 1.2).

1.1 Ո՞ր տարածաշրջանի երգ է:

ա) Գուրիա

բ) Սամեգրելո

գ) Կախեթի

դ) Աջարիա

1.2 Ի՞նչ ժանրի երգ է :

ա) Աշխատանքային

բ) Օրացուցային

գ) Արշավային

դ) Խնջույքի

Առաջադրանք 2.

Նախքան երկրորդ երաժշտական հատվածն  ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (2.1 և 2.2).

2.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

ա) Ջանսուղ Կախիձե

բ) Ինոլա Գուրգուլիա

գ) Գոգի Ցաբաձե

դ) Դավիթ Թորաձե

2.2 Ո՞ր կինոֆիլմից է  այս երգը:

ա) «Ուրիշի երեխաները»

բ) «Նինո»

գ) «Օր վերջին, օր առաջին»

դ) «Հանդիպում լեռներում»

Առաջադրանք 3.

Նախքան երրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (3.1 և 3.2).

3.1 Ո՞ր դարաշրջանի ստեղծագործություն է:

ա) Վերածննդի

բ) XIX դարի

գ) Բարոկկոյի

դ) XX դարի

3.2 Ո՞ր ժանրի հատված է:

ա) Օպերայի

բ) Կանտատայի

գ) Մեսսայի

դ) Օրատորիայի

Առաջադրանք 4.

Նախքան չորրորդ երաժշտական հատվածն  ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (4.1 և 4.2).

4.1 Ո՞ր կերպարի դերերգն է հնչում:

ա) Կերուբինոյի

բ) Դոն Ժուանի

գ) Պապագենոյի

դ) Ֆիգարոյի

4.2 Ո՞ր ժանրի մենակատարային օպերային համար է:

ա) Արիոզո

բ) Ռոմանս

գ) Կավատինա

դ) Արիա

Առաջադրանք 5.

Նախքան հինգերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (5.1 և 5.2).

**5.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:**

ա) Ֆելիքս Մենդելսոն

բ) Ռոբերտ Շուման

գ) Յոհաննես Բրամս

դ) Կարլ Վեբեր

**5.2 Ո՞ր պարն է ընկած երկի հիմքում:**

ա) Խորա

բ) Օբերեկ

գ) Չարդաշ

դ) Պոլկա

Առաջադրանք 6.

Նախքան վեցերորդ  երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (6.1 և 6.2).

**6.1 Ո՞ր ժանրի ստեղծագործության հատվածն է:**

ա) Օրատորիայի

բ) Օպերետայի

գ) Բալետի

դ) Մյուզիքլի

**6.2 Ո՞վ է երաժշտության հեղինակը:**

ա) Լեոնարդ Բեռնսթայնը

բ) Ջորջ Գերշվինը

գ) Լաիոնել Բարտը

դ) Էնդրյու Լլոյդ Ուեբերը

**Առաջադրանք 7։** (1 միավոր)

Հրահանգ։ Ունկնդրեք երաժշտական հատվածը, նոտային գրառման մեջ տրված չորս տարբերակից ընտրեք ունկնդրած լադի համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք ճիշտ պատասխանը։ Լադը լսեք երկու անգամ։ Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան, նոտային գրառումը վերանայելու համար։

ա)


բ)


գ)


դ)


**Առաջադրանք 8.** (1 միավոր)

<u>Հրահանգ:</u> Լսեք երաժշտական հատվածը, նոտային գրառման մեջ տրված չորս տարբերակից ընտրեք ունկնդրած ռիթմիկ ֆիգուրացիայի համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք ճիշտ պատասխանը:
Ռիթմիկ ֆիգուրացիան լսեք երկու անգամ:
Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան, նոտային գրառումը վերանայելու համար:



**Առաջադրանք 9:** (5 միավոր)

*Երաժշտական թելադրություն:*

Հրահանգ: Ունկնդրեք մեղեդին և գրառեք նոտային համակարգի վրա: Միղեդին մենաձայնային է, ութ տակտանոց և տրված է մեկ տոնայնության մեջ: Այն լսելու և գրելու համար տրվում է 15 րոպե: Մեղեդին լսում եք ձայնագրությամբ չորս անգամ, ամեն հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե: Թելադրությունը տրված է Մի մինոր e moll տոնայնության մեջ

*Ձեր կողմից գրառված մեղեդին տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա տրված նոտային համակարգի վրա:*

**Առաջադրանք 10:** (13 միավոր)

*Երաժշտական ստեղծագործության վերլուծություն*

Հրահանգ: Առաջադրանքը նախատեսում է երաժշտական ստեղծագործության վերլուծություն ըստ տրված հարցերի, ձայնային և նոտային գրառումների հիման վրա: Երաժշտական ստեղծագործության ձայնագրությունը լսում եք երեք անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե: Նախքան ունկնդրելը տրվում է 30 վայրկյան, առաջադրանքի հարցերը վերանայելու համար:

(Հարցերը տրված են հաջորդ երկու էջի վրա)

1. Ո՞ր վոկալային ժանրին է պատկանում տրված հատվածը: Հիմնավորեք ձեր կարծիքը: (2 միավոր)

2. Որոշեք. (3 միավոր)

ա) 28 - 36 տակտերում  զետեղված հատվածների երաժշտական ձևը, (1 միավոր)

բ) Նշված  հատվածի սկզբնական տոնայնությունը  (28-րդ տակտից), (1 միավոր)

գ) 34-36 -րդ տակտում տրված  կաղանսի մեջ մտնող ակորդների հարմոնիկ (ներդաշնակ)  ֆունկցիաները: (1 միավոր)

3. Բնութագրեք, թե ինչպես է զարգանում երաժշտական հատվածի  գեղարվեստա-հուզական կողմը, վերլուծեք զարգացման դինամիկան և հակիրճ նկարագրեք, երաժշտական  արտահայտչականության ո՞ր միջոցներն են (ի՞նչ տեսակի մեղեդի, ռիթմ, տեմպ, տեմբր (հնչերանգ), հարմոնիա (ներդաշնակություն), լադատոնայնություն, ֆակտուրա և այլն) առանձնապես կարևոր երաժշտական հատվածի գեղարվեստական բովանդակությունը ստեղծելու համար:  (3 միավոր)

4. Ունկնդրած հատվածի երաժշտական բնութագրիչների հիման վրա, որոշեք ստեղծագործության ստեղծման դարաշրջանը և կոմպոզիտորի ինքնությունը: (2 միավոր)

5. Կոմպոզիտորի ինքնությունը որոշելու դեպքում, հակիրճ բնութագրեք ունկնդրած ստեղծագործության հեղինակի մյուս ստեղծագործությունները, նշեք նորարարական նվաճումները, որոշեք ժամանակահատվածը և նշեք, թե ինչ բովանդակային, ժանրային և գեղարվեստական փոփոխությունների է ենթարկվել կոմպոզիտորի ողջ ստեղծագործությունը: Քննարկեք ունկնդրած ստեղծագործության երաժշտագեղարվեստական համատեքստի յուրահատկությունը: (3 միավոր)

(Երաժշտական հատվածի նոտային գրառումը տրված է հաջորդ էջերում)


Allegro agitato ( ♩ = 138 )
Ri - tor - no vin - ci - tor!.. E dal mio lab - bro u - sci l'ein - pia pa -
ff
pp
ro - la! vin - ci - tor del pa - dre mi - o... di lui che im -
f
pp


9
pu - gna l'ar - mi per me... per ri - do - nar - mi u - na pa - tria, u - na reg - gia e il no - me il -
12
lu - stre che qui ce - lar m'e for - za! Vin - ci tor de' miei fra -
f


16
tel - li... ond' io lo veg - ga, tin - to del san - gue a -
pp
20
ma - to, tri - on-far nel plau - - - - so dell' E - gi - zie co -
f
f


24
or - ti!.. E die - tro il car - ro, un Re... mio pa - dre... di ca - te - ne av - vin - to!..
ff
28
Piu mosso ( 𝅗𝅥 = 100 )
pp
L'in - sa - na pa - ro - la, o nu - mi, sper - de - te! Al
pp


33
se - no d'un pa - dre la fi - glia ren - de - te; strug - ge - - -
33
f
38
te, strug - ge - - - te, strug - ge - te le squa - dre dei
38


43
ff
no - stri op - pres - sor!
Ah!
sven - tu - ra - ta! che
ff
Andante poco piu lento della I volta
48
dis - si?
e l'a - mor
mi - o?
Dun - que scor - dar pos -
p cantabile
pp
3


52
s'i - o que-sto fer - vi - do a-mo - re che, op-pres - sa e schia - va, co - me rag - gio di
55
sol qui mi be - a - va? Im - pre - che - ro la mor - te a Ra - da -
pp
dolce


58
f
mes... a lui ch'a - mo pur tan - to! Ah, non fu in ter - ra
61
mai da piu cru - de - - - li an - go - scie un co - re af - fran - to!


rall.
64
64
3
3
morendo

## II մաս

Առաջադրանքներ 11-28.

Հրահանգ: (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1 միավոր) - Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրված պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա հետևյալ կերպ. պատասխանների համապատասխան վանդակում դրեք X նշան: Ոչ մի ուրիշ նշում՝ հորիզոնական կամ ուղղաձիգ գծեր, շրջագծում և այլն, համակարգչային ծրագիրը չի ընկալում : Եթե ցանկանում եք պատասխանների թերթիկի վրա պատասխանը ուղղել , ամբողջությամբ գունավորեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը և հետո նշեք պատասխանի նոր տարբերակը ( դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը , որն ուղղել եք:

Առաջադրանք 11.

Ավստրո-գերմանական  ռոմանտիկական դպրոցի ո՞ր կոմպոզիտորի համար սիմֆոնիայի ժանրը *չէր հանդիսանում* գեղարվեստական գաղափարի արտահայտման միջոց:

ա) Շումանի

բ) Շուբերտի

գ) Վեբերի

դ) Մենդելսոնի

**Առաջադրանք 12.**

**Ո՞ր վոկալ-գործիքային ժանրի մենակատարն է *ավետարանիչը:***

ա) Օրատորիայի

բ) Մեսսայի

գ) Պասիոնի

դ) Կանտատայի

**Առաջադրանք 13.**

**Ո՞ր սահմանումն է համապատասխանում տոկատային:**

ա) Երկ մենակատար վոկալիստների, երգչախմբի և նվագախմբի համար

բ) Արագ տեմպի, ռիթմորեն բարդ, վիրտուոզ պիես

գ) Երկ, որի կատարման մեջ իրար հաջորդում են նվագախումբն ու մենակատարը

դ) Ծրագրային տիպի  պիես

**Առաջադրանք 14.**

**Ո՞ր օպերային թատրոնն է գտնվում Մեծ Բրիտանիայում:**

ա) «Լա Սկալան»

բ) «Մետրոպոլիտեն օպերան»

գ) «Պալատական օպերան»

դ) «Գրանդ օպերան»

**Առաջադրանք 15.**

**Ի.Խեյֆեցը, Ի.Մենուհինը, Լ.Բաթիաշվիլին նախևառաջ հանրաճանաչ են, որպես՝**

ա) դաշնակահարներ

բ) ջութակահարներ

գ) թավջութակահարներ

դ) դիրիժորներ

Առաջադրանք 16.

**Ո՞ր վրաց կոմպոզիտորի ստեղծագործության մեջ է տրվել հատուկ նշանակություն երգչախմբային երաժշտության ժանրին:**

ა) Զաքարիա Փալիաշվիլիի

ბ) Դիմիտրի Արաղիշվիլիի

გ) Նիկո Սուլխանիշվիլիի

დ) Մելիտոն Բալանչիվաձեի

**Առաջադրանք 17.**
**Ո՞ր ոճի նշաններն են բացահայտվել Բեթհովենի վերջին ժամանակաշրջանի ստեղծագործություններում:**

ա) Մինիմալիզմի

բ) Ռոմանտիզմի

գ) Էքսպրեսիոնիզմի

դ) Իմպրեսիոնիզմի

Առաջադրանք 18.

Ո՞ր վրացական օպերայի երգչախմբային տեսարանի հիմքում է ընկած «Քարթվելո, խելի խմալս իկար» («Վրացի, թուրդ ձեռքդ առ»), ժողովրդական երգը:

ա) «Ասք Շոթա Ռուսթավելիի մասին»

բ) «Մինդիա»

գ) «Աբեսալոմ և Էթերի»

դ) «Քեթո և Կոտե»

**Առաջադրանք 19.**

**Ո՞ր կոմպոզիտորներն էին ապրում և գործունեություն վարում միևնույն ժամանակահատվածում:**

ա) Յոհան Շտրաուս, Գեորգ Ֆրիդրիխ Հենդել

բ) Ամադեուս Մոցարտ, Յոհաննես Բրամս

գ) Ջոակինո Ռոսսինի, Ջուզեպպե Վերդի

դ) Անտոնիո Վիվալդի, Պիեռլուիջի Պալեստրինա

Առաջադրանք 20.

Ո՞վ էր վրացական ֆոլկլորային երգչախմբի հիմնադիրը XIX դարում:

ա) Զաքարիա Փալիաշվիլին

Ձ) Դիմիտրի Արաղիշվիլին

գ) Իա Կարգարեթելին

ջ) Լադո Աղնիաշվիլին

Առաջադրանք 21.

«Տարանտելա» պարի հայրենիքն է՝

ա) Ֆրանսիան

բ) Արգենտինան

գ) Իսպանիան

դ) Իտալիան

**Առաջադրանք 22.**

**Ո՞ր օպերան *չի գրել* Վ.Ա. Մոցարտը:**

ա) «Կախարդական սրինգը»

բ) «Ազատ հրաձիգը»

գ) «Ֆիգարոյի հարսանիքը»

դ) «Դոն Ժուանը»

**Առաջադրանք 23.**

**Ո՞րը ժողովրդական երգ *չէ*:**

ա) «Ծինծղարո»

բ) «Խասանբեզուրա»

գ) «Ճիճե Տուրա»

դ) «Շեն խար վենախի»

Առաջադրանք 24.

Նոտային գրառման մեջ տրված ռիթմիկ գծագրերից ո՞րն է կետագծային ռիթմ:

ա) 



բ) 

գ) 

դ) 

**Առաջադրանք 25.**

**Լիստի դաշնամուրային ստեղծագործության նմուշներ *<u>չեն հանդիսանում</u>*՝**

ա) Համփորդության տպավորություններով ստեղծված պիեսները

բ) Պրելյուդների (նախանվագ) ցիկլը

գ) Ծրագրային կոնցերտային էտյուդները

դ) Օպերային թեմաներով պարաֆրազները

Առաջադրանք 26.

Ո՞ր օպերան չի սկսվում ուվերտյուրայով (նախերգանքով):

ա) «Թանհոյզերը»

բ) «Սևիլյան սափրիչը»

գ) «Բոհեման»

դ) «Օրփեոսն ու Էվրիդիկեն»

**Առաջադրանք 27.**

**Ո՞ր երաժշտական տերմինն է նշանակում «երգուն» կատարում:**

ა) Dolce,

ბ) Agitato,

გ) Cantabile,

დ) Pesante:

Առաջադրանք 28.

Ինչպե՞ս է կոչվում երաժշտական ստեղծագործության մեջ միևնույն մեղեդիական արտահայտության, ռիթմիկ պատկերի կամ հարմոնիկ դարձվածքի բազմակի կրկնությունը:

ա) Օստինատո

բ) Մեջբերում

գ) Կոլլաժ

դ) Ալեատորիկա

**Առաջադրանքներ 29 - 32.** (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան ՝ 1 միավոր)

*Կառուցում նոտայից*

**Հրահանգ: Կառուցեք ֆա նոտայից տրված ինտերվալը, եռահնչյուն և քառահնչյուն ակորդները, լադը և գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված նոտային համակարգի վրա:**

29. Փոքր սեպտիմա;

30. Մինորային սեքստակորդ;

31. Փոքր մինորային սեպտակորդ;

32. Մեղեդիական մաժոր.

Առաջադրանքներ 33-35.

*Համապատասխանության որոշում*

Հրահանգ: Առաջադրանքում տրված է երկու սյունակ: Որոշեք համապատասխանությունը դրանց տրվածության միջև: Ձախ սյունակի յուրաքանչյուր տվյալին (1, 2, 3) համապատասխանում է աջ սյունակի միայն մեկ տվյալ (ա, բ, գ, դ, ե): Յուրաքանչյուր համապատասխանությունը պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում նշեք X նշանով:

**Առաջադրանք 33.** (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան ՝ 1 միավոր)

**Համապատասխանեցրեք կոմպոզիտորների անունները դարաշրջաններին և ոճերին.**

1. Կլոդ Դեբյուսի
2. Քրիստոֆ Գլյուկ
3. Յոհաննես Բրամս

ա) Վերածնունդ

բ) Նեոկլասիցիզմ

գ) Ռոմանտիզմ

դ) Կլասիցիզմ

ե) Իմպրեսիոնիզմ

**Առաջադրանք 34.** (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան ՝ 1 միավոր)

**Որոշեք համապատասխանությունը բալետների և կոմպոզիտորների միջև**

1. «Պետրուշկա»
2. «Դոն Քիշոտ»
3. «Ժիզել»

ա) Ռոդիոն Շչեդրին

բ) Ադոլֆ Ադան

գ) Կլոդ Դեբյուսի

դ) Իգոր Ստրավինսկի

ե) Լյուդվիգ Մինկուս

**Առաջադրանք 35.** (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1 միավոր)

**Որոշեք համապատասխանությունը սիմֆոնիկ ստեղծագործությունների և ժանրերի միջև.**

1. «Էգմոնտ»
2. «Պրելյուդներ»
3. «Շահրազադ»

ա) Սիմֆոնիկ սյուիտ

բ) Ծրագրային սիմֆոնիա

գ) Սիմֆոնիկ ուվերտյուրա

դ) Սիմֆոնիկ պիես

ե) Սիմֆոնիկ պոեմ

**Առաջադրանքներ 36-40**. (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան ՝ 1 միավոր)

*«Ճշմարիտ է-Սխալ է»*

Հրահանգ: Որոշեք տրված դրույթը ճշմարիտ է թե սխալ, եթե համարում եք, որ դրույթը ճշմարիտ է, ապա նշեք X նշանը համապատասխան վանդակում, նման դեպքում մեկնաբանություն անել չի պահանջվում, իսկ եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա համապատասխան վանդակում դրեք X նշանը և հատկացված տեղում գրեք ճիշտ բացատրությունը:

Սխալ դրույթի դեպքում, տրված բացատրությանը համապատասխանեցրեք ճիշտ տերմին/բառ կամ տրված տերմինի/բառի համար գրեք ճիշտ բացատրություն:

Հաշվի առեք, որ չի ընդունվի այն պատասխանը, ուր տրված բացատրության դրական ձևը կփոխվի բացասականի կամ ընդհակառակը:

**Առաջադրանք 36.**

Ֆրեդերիկ Շոպենը դաշնամուրային բալլադի հիմնադիրն է:

**Առաջադրանք 37.**

Սյուիտի ժանրը միամաս վիրտուոզ պիես է նվագախմբի համար:

**Առաջադրանք 38.**

Առնոլդ Շոնբերգը մշակել է կոմպոզիցիայի նոր մեթոդ՝ դոդեկաֆոնիա:

**Առաջադրանք 39.**

Զինգշպիլը օպերային ժանր է, որի դրամատուրգիան կառուցված է արիաների, անսամբլների, երգչախմբերի և secco ռեչիտատիվի հաջորդականությամբ:

**Առաջադրանք 40.**

«Ֆիգարոյի հարսանիքը» օպերայի լիբրետտոն գրված է գերմաներեն լեզվով:

**Առաջադրանքներ 41-42.** (Յուրաքանչյուր առաջադրանք՝ 1 միավոր)

*Ժամանակագրության որոշում*

<u>Հրահանգ:</u> Ժամանակագրական առումով՝ հնագույնից դեպի նորագույնը դասավորեք թվարկացանկը: Պատասխանների աղյուսակում ժամանակագրական հաջորդականությունը նշված է թվանշաններով՝ 1-ից մինչև 4-ը: Պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում, ընտրված թվանշանի երկայնքով, գրեք ճիշտ պատասխանները այբուբենի համապատասխան տառերով (ა, ბ, გ, დ):

Առաջադրանք 41.

**Ժամանակագրական առումով դասավորեք թվարկացանկը, ըստ տեղծագործությունների ստեղծման ժամանակաշրջանի.**

ա) «Ստիքս» մենանվագ ալտի և սիմֆոնիկ նվագախմբի համար

բ) Օպերա «Մինդիա»

գ) «Առակ» պատմողի, երեք վոկալիստի և գործիքային սեպտետի համար

դ) Սիմֆոնիկ պոեմ «Զվիադաուրի»

Առաջադրանք 42.

**Ժամանակագրական առումով դասավորեք վրացի բալետի պարուհիների ազգանունների թվարկացանկը, նրանց կյանքի և գործունեության ժամանակաշրջանի համաձայն.**

ა) Նինո Անանիաշվիլի

ბ) Վերա Ծիգնաձե

გ) Լալի Կանդելակի

დ) Մակա Մախարաձե